# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
## Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ
## WESTERN PRELACY
### OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
### H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: info@westernprelacy.org Website:www.westernprelacy.org




## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ Ս. ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

Կիրակի, 10 Յուլիսին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը:

## PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT HOLY MARTYRS CHURCH

On Sunday, July 10th, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at Holy Martyrs Church in Encino and deliver the sermon.

***

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ ՏՈՒԱՒ ՖՐԵԶՆՈՅԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀՈՎԻՒԻՆ ՈՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Չորեքշաբթի 6 Յուլիսին Ֆրեզնօ մեկնեցաւ, այցելութիւն մը տալու Ս. Երրորդութիւն մայր եկեղեցւոյ հոգեւոր հովիւին ու հոգաբարձութեան: Առաջնորդ Սրբազանին կ'ընկերանային Տ. Պօղոս Քհնյ. Պալթայեան եւ երէցկինը, որոնք Յունաստանէն հիւրաբար կը գտնուին մեր Թեմը:

Խորհրդակցութեան նիւթ եղան ծխական համայնքի աշխատանքի դաշտերուն առնչուող հարցեր ու ծրագիրներ, որոնց շարքին՝ Հայ Մանուկի Տարուան նուիրուած ծրագիրներն ու Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հովուապետական մօտալուտ այցելութեան նախապատրաստական աշխատանքները:

Առաջնորդ Սրբազանն ու ընկերակիցները Լոս Անճելըս վերադարձան Հինգշաբթի օր:

## PRELATE MEETS WITH PASTOR AND BOARD OF TRUSTEES OF HOLY TRINITY CHURCH

On Wednesday, July 6th, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, departed for Fresno where he met with the Pastor and Board of Trustees of Holy Trinity Church to discuss a number of issues. The Prelate was accompanied by Rev. Fr. Boghos Baltayan who is visiting from Greece.

Among the issues discussed were plans for the Pontifical visit of H.H. Catholicos Aram I in October, and events to celebrate the Year of the Armenian Child.

The Prelate and Fr. Boghos returned on Thursday.

***

## ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ »ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ« ՊԱՏԿԵՐԱՍՓԻՒՌԻ ՅԱՅՏԱԳԻՐԸ ՊԻՏԻ ՍՓՌՈՒԻ ՆԱԵՒ ՖՐԵԶՆՈՅԻ ՄԷՋ

Ազգային Առաջնորդարանիս պատկերասփիւռային «Եկեղեցին Հայակական» հաղորդաշարը, որ ամէն Կիրակի կը սփռուի «Հորիզոն» եւ ICFN կայաններէն, այսուհետեւ պիտի սփռուի նաեւ Ֆրեզնոյի մէջ, KGMC Channel 43.6 կայանէն առաւօտեան ժամը 9ին: Պատկերասփռումը կարելի կը դառնայ Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն Մայր Եկեղեցւոյ ծխական համայնքի անդամներէն Բարշ. Մարք Սրկ. Շիրինի ջանքերով:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց եկեղեցանուէր հայորդիին ճիգերը, որոնք կը նպատակադրեն հոգեւոր սնունդ մատակարարող հաղորդումներ հասցնել շրջանի հայութեան:

## PRELACY WEEKLY RELIGIOUS TELEVISION PROGRAM TO AIR IN FRESNO

We are pleased to announce that the Prelacy's weekly religious television program will begin airing in Fresno on KGMC Channel 43.6 on Sunday mornings at 9:00 a.m..

This was made possible by Mr. Mark Shirin, Deacon at Holy Trinity Church in Fresno and President of Ventura TV Video Appliance Center who is sponsoring the new channel.

"It is our belief that by offering 'Yegeghetsin Haygagan' on our station, we will be able to reach the Holy Trinity community as well as the Fresno Armenian community at large who have been deprived of quality Armenian spiritual programming due to the lack of any form of Armenian language shows on local broadcast television", said Mr. Shirin.

The Prelate thanked and commended Mr. Shirin for his initiative to offer the Prelacy program to residents of the Central Valley, and expressed confidence that it will be well received by the community.

***